

# ՊԱՏՄՎԳԻՏԱԿԱՆ



Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՊԵՎՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ

IV դարը համարվում է Հայոց Եկեղեցու սկզբնական դարը, երբ քրիստոնեությունը Հայաստանում ընդունվեց որպես պետական կրոն: Հանգամանքների բերումով, որը կարևոր նշանակություն է ստանում այժմ, նույն IV դարում հոռմեացի աշխարհագրագետ-քարտեզագիր Կաստորիոսի կողմից կազմվել է Հռոմեական (Բյուզանդական) կայսրության ճանապարհների քարտեզը, որը քարտեզի առաջին հրատարակչի անունից ելմեղով ստացել է հայտնի «Պատինգերյան քարտեզ» անվանումը: Այն հատկանշական է նաև նրանով, որ տվյալ ժամանակաշրջանի հրամայական պահանջներից ելմեղով, նրա վրա արտահայտվել են քրիստոնեական աշխարհի առաջին Եկեղեցիները<sup>1</sup>:

Պատինգերյան քարտեզը անփոխարիմելի աղյուր է այն երկրների պատմության համար, որոնք հայտնվել են նրա կազմման տեսահաշտում Ալիսած Ասիայից մինչև Եվրոպա և Հյուսիսային Աֆրիկա: Այն առավել արժեք է ներկայացնում այն ժողովորդների պատմության համար (այդ թվում՝ հայերի), որոնք քարտեզի կազմման ժամանակ սեփական լեզվով դեռևս չունեն գիր և գրականություն: Այդ պատճառով քարտեզի համապատասխան հատվածը, որտեղ արտացոլված է Հայատանը, ինչպես նաև նրան հարևան և հարակից Առաջավոր Ասիայի երկրները, հատկապես կարևորվում է որպես այնպիսի տեղեկությունների աղյուր, որը կապվում է նաև Հայաստանի պատմության մինչգրային ժամանակաշրջանի հետ:

Ինչպես հայտնի է, նման տեղեկություններ է բերում նաև Անանուն Ռապենացին, որը օգտվել է Պատինգերյան քարտեզի վաղ ընդորինակություններից: Էկրա-

<sup>1</sup> Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Առաջին Եկեղեցական հաստատությունները Հայաստանում ըստ Պատինգերյան քարտեզի, «Հշմիածին», 1999 թ.: Բ, էջ 65-70;

տան-Արտաշատ ճանապարհի կայանները թվարկելիս նա հիշատակում է «Didyma» անվամբ կայանը: Անանուն Ռավեննացին 670 թ-ին (ըստ Մարկվարտի 734 թ-ից ոչ շտու) ստեղծել է իր Կոսմոգրաֆիան (Ravennatis Anonymi Cosmographia)՝ աշխարհագրական մի կոմպիլացիա, որի կազման ժամանակ օգտվել է նաև Կաստորիոսի քարտեզի պատճեններից, ինչպես նաև այլ (հոռմեական, հունական) իշխանություններից (մղոնաչափը): Նրա կողմից Didyma-ի (հունարեն՝ «երկվորյակներ») հիշատակությունը արտացոլում է հին աշխարհում արքայական դիմաստիայի աստվածայնացման սովորությի տարածվածությունը: Հատկապես մեծ էր Արևի աստծո՝ Ապոլլոնի (Տիր) և Լուսնի աստվածութուն՝ Արտեմիդայի (Անահիտ) պաշտամունքը: Didyma-ն այն բնակավայրի անվանումն է, որն ընկած էր հին Միջերթից (այժմ Թուրքիայում) ոչ շատ հեռու՝ դեպի հարավ: Այն հայտնի էր իր տաճարով և Ապոլլոնի պատգամախոտով (գոլշակ): Այժմ այն ավերված վիճակում է:

Տվյալ դեպքում Անանուն Ռավեննացին «Didyma» անունը օգտագործում է փոխարերական իմաստով՝ նկատի ունենալով Ապոլլոն (Տիր) աստծո պաշտամունքի այն վայրը, որը գտնվում էր հին Արտաշատի կողքին: Մի շարք մանրամասներ դրա վերաբերյալ վկայակոչում է Մովսես Խորենացին: Նկարագրելով Արտաշատի՝ Հայաստանի նոր մայրաքաղաքի հիմնադրումը Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) կողմից՝ նա գրում է. «Ուստի առանց դժվարության և արագ շինուալով՝ այնտեղ մենք յանձնեցնում և Բագարանից, - քաղաք, որը հիմնադրել էր Երվանդ թագավորը, և որտեղ պահվում էին Ապոլլոնի և Արտեմիսի արձանները (Հ. Մ.), - այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուտքերը: Բայց Ապոլլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհի մոտ»<sup>2</sup>:

Մովսես Խորենացու այս տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ հայկական Didyma-ն Արտաշես I-ը հիմնել է Արտաշատից ոչ շատ հեռու: Խակ ինչ վերաբերում է այն ճանապարհին, որի մասին հիշատակում է Խորենացին, ապա պետք է ասել, որ այն հանդիսանում էր այն ժամանակվա Մեռվտիս-Կոլյսիդական ճանապարհի մի մասը, որը սկիզբ առնելով Տամահից (Ազով), այնուհետև Վրաստանով և Հայաստանով հասնում էր մինչև Մարաստան և Հնդկաստան: Մոտավորապես սկսած մ. թ. ա. II-I դդ-ից այս երթուղով էր անցնում «Մեծ մետաքսի ճանապարհ» հյուսիս-արևմտյան ճյուղը՝ այն է Էկրատան-Արտաշատ երթուղին: Կարելի է եթեադրել, որ Արտաշես I-ը Ապոլլոնի տաճարով ցանկացել է համաշխարհային այդ մայրուղու կողմից պատկել իր նոր մայրաքաղաքի մոտեքը:

Ինչպես հայտնի է, Արտաշատի մոտ գտնվող Ապոլլոնի տաճարը իր գյուղում պահպանեց մինչև մ. թ. III դարը: Այն կործանվեց պարսից արքա, Սասանյան արքայատոհմի հիմնադիր Արտաշեր I-ի (մոտ 180-239/241 թթ., գարին տիրացել է 226 թ-ից) կողմից:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 112:

Անանուն Ռավենացու կողմից այս տաճարի հիշատակությունը մեզ բերում է այն մտքին, որ նրա հիմքի վրա մ.թ. IV դ-ում կարող էր կառուցված լինել քրիստոնեական մի հաշ-որ շինություն: Մենք այլ բացատրությամբ, Անանուն Ռավենացու կողմից այս տաճարի (կամ նրանից մնացած պվերակների) հիշատակությունը «Didyma» անվամբ, կարող էր տրվել հիմք ունենալով պատմական ավանդությունը:

Նմանատիպ հին հուչարձան էր հանդիսանում նաև Անգող (Անգեղ-տուն), որը Անանուն Ռավենացու մոտ նշված է «Անանուն կայան» անվամբ և գտնվում էր Տիգրանակերտ-Մելիտենն ճանապարհի վրա: Համաձայն Մովսես Խորենացու տեղեկությունների, Անգեղ-տունը «սերված է մի ոմն Պատրամից, Հայկի թոռոհյ»<sup>3</sup>: Այս բնակավայրը հայտնի է նաև խեթական աղբյուրներից: Ուսումնասիրողները գրտնում են, որ Անգող գտնվելիս է եղել հին աքեմենյան ճանապարհի վրա (Դարեհ I-ի «Արքունի ճանապարհ»), նրա Ամիրից մինչև Մելիտենն (Մալաթիա) ընկած ճանապարհարտվածում:

Մ.թ. ա. 160-ական թթ.-ին Սոփենեի թագավոր Արկաթիոսը, նվաճելով Անգողը, այն իր մայրաքաղաքը դարձեց և վերանվանեց Արկաթիոկերտ: Այս քաղաքը դարձավ Սոփենեի կրոնական, ուսումնական, արհեստա-առևտրական կենտրոնը: Արկաթիոկերտ-Անգողում էին թաղվու Սոփենեի թագավորները:

Մ.թ. թ. III դ-ում, եղր Տիգրիս գետի վերին շրջանները անցան հոռմեացիներին, վերին Սոփենեին տրվեց հայկական Ծոփք անվանումը, իսկ ստորին Սոփենեն, որը միացվել էր Սիրիային, անվանվեց Սոփիանեն: IV դ-ում Սոփիանենից առանձնացավ Անգեղ-տունը, որը դարձավ Արշակունյաց թագավորական տաճ «Ճեղական իշխանության» կալվածքներից մեկը: Համաձայն Փավստոս Բուզանդի տեղեկությունների, Անգեղ-տաճ Անգող ամուր բերդում էին թաղված Հայոց Արշակունի շատ թագավորներ<sup>4</sup>:

Պևտինգերյան քարտեզի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Անգողը ընկած էր Տիգրիսի աջ ափին (արևմտյան Տիգրիս) «ad Tygrem» («Տիգրիսի մոտ») կայանից 27 հոռմեական մետու ( = 40 կմ) հեռավորության վրա: Ուսումնասիրողները այս անվան տակ փորձում են տեսնել Ամիրը (այժմյան Դիարբեքիրը), որը ընկած է Արևմտյան Տիգրիսի աջ ափին:

Անգողը հանդիսանում էր Տորք Անգեղ աստվածության պաշտամունքի գլխավոր կենտրոնը: «Անգեղ» անունը Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ փոխարինում է Միջագետքի Ներգալ աստծուն, որը հանդիսանում էր շումերական պատրիոնի անդրշիրիմյան թագավորության աստվածությունը: Համաձայն Մովսես Խորենացու տեղեկությունների, Տորքը կուսակալ էր նշանակված Անգեղ-տուն գավառում:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 46:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 191:

Պևտինգերյան քարտեզի վրա, հճապես ասվեց, Անգղը նշված է Տիգրանակերտ-Մելիտենն ճանապարհաբառվածում: Նրա անվան մոտ առկա է երկու աշտարակ-Աերի նշանը, որը վկայում է, որ IV դ-րւ այդ քաղաքը նույնպես հանդիսանում էր կարևոր կրթական կենտրոն:

Ինչպես հայտնի է Ագաթանգեղոսի տեղեկություններից, Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հոչակեղուց հետո անմիջապես Հայաստանի տարբեր շրջաններ է ուղարկում եպիսկոպոսների: Նրանցից մեկը հենց Անգեղ-տան եպիսկոպոսն էր (անունը հայտնի չէ): Ն. Աղոնցը այդ կապակցությամբ, վկայակոչելով Ագաթանգեղոսի արարական խմբագրությունը, նշում է, որ Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոս ուղարկեց նաև Անգեղ-տուն: Նըշված ժամանակաշրջանում Անգեղ-տունը իրենցից ներկայացնում էր, ինչպես Ն. Աղոնցն է նշում, հատուկ շրջան, որի մեջ էր մտնում Սովհամեննի այն մասը, որը ընկած էր Անգղ բերդի շրջակայքում: Այսպիսով, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Պևտինգերյան քարտեզի վրա Անգղը ներկայացնում է որպես Հայոց Եկեղեցու հիմնած թեմերից մեկի կենտրոն:

Պևտինգերյան քարտեզի վրա նշված են նաև հեթանոսական մեհյաններ, որոնք պատկանում են կրակի աստծուն: Դրանց թվին պետք է դասել, մասնավորապես, «Strangira» կայանը (Անանուն Ռավենացու մոտ «Stranguria»), որը ընկած է Արտաշատ-Սեբաստոպոլիս (Դիոսկորիա, այժմյան Սովորում) ճանապարհի վրա: Strangira-ն գտնվում է Արտաշատից 30 հոռո. մղոն (= 45 կմ) հեռավորության վրա:

Ն. Մարը «Strangira» կայանը տեղորոշեց Աշտարակում: «Strangira» անունը (լատ. *Strangula* - «փեղդել»), հաշվի առնելով ժողովրդական ստուգարանությունը (*Strang* - *uria*, *Shtrang* - *uria*), նա բացատրում է որպես «օձաքաղաք» («Յայրաքաղաք»): Երևում է, որ Հայաստանում Աշտարակը մինչ քրիստոնեական ժամանակաշրջանում հանդիսանում էր օձ-վիշապի աստվածության երկրագության կարևոր կենտրոններից մեկը:

Նման մեկ այլ հուշարձան էր հանդիսանում Օձունը, որը Պևտինգերյան քարտեզում նշված է «Lazo» (Անանուն Ռավենացու մոտ «Jazo») անվամբ: Օձունի և հայերեն («օձ» բառից), և լատիներեն (jaculus, jacio-«օձ», որը սրբաթաց ցատկում է իր զորի վրա») անվանումները ցույց են տալիս, որ այս բնակավայրում հեթանոսական ժամանակաշրջանում գոյություն է ունեցել օձ-վիշապի պաշտամունք:

Պետք է նշել նաև, որ Օձունի լատիներեն անվանումը («օձ», որը սրբաթաց ցատկում է իր զորի վրա») հստակ ընդգծում է վերջինիս թևավոր օձ լինելու հանգանաճը: Այս ձևով, ինչպես գրում են ուսումնասիրողները, իրար են միախյուսվում երկինքը և երկիրը՝ վերին (թռչուններ) և ստորին (օձեր և այլ կենդանիներ) հակադիր աշ-

<sup>5</sup> Ն. Աղոնց, Հայաստան Հուստիմիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 364-365:

<sup>6</sup> Հ. Մարը, Լեգенды об основании Куара в Армении и Киева на Руси, «Известия ТАИМК», т. III, Ленинград, 1924, стр. 278.

խարիմները: Օձունը և Աշտարակը, ըմկած լինեղով Լոռվա և Արագածի փեշերին, հանդիսանում են այնպիսի վայրեր, որտեղ հայտնաբերվել են վիշապի մեծաքանակ քարակոթողներ:

Պևտինգերյան քարտեզի վրա, ի տարբերություն «Strangira» կայանի, Օձուն անվան մոտ առկա է երկու աշտարակների նշանը: Ինչպես արդեն նշել ենք մեր հոդվածում («Հշմհածին», Բ, 1999 թ.), IV դ-րու Օձունում հիմնվել էր մի եկեղեցի, որը հանդիսանում էր Հայաստանի առաջին եկեղեցական հաստատություններից մեկը:

«Lazo» կայանով անցնող Մ'ծինեթա-Արտաշատ երթուղու (որը կազմում է Արտաշատ-Մ'ծինեթա-Արտաշատ շրջանաձև ճանապարհի մի մասը) վրա, Satara կայանից (Անանուն Ռավենացու մոտ՝ Cacara) հետո, որը ուսումնասիրողները համադրում են Քասաղին (Ապարանի հին անվանումը), նշված է Bustica կայանը: Լատի-Շերեն «Bustica» բառի բացատրություններից մեջն է «գերեզման», «գերեզմանաբլուր» (Busti Bustum): «Bustica» անվանումը ցուց է տախի Աշտարակի մոտ գտնվող Արշակունյաց արքայատոհին դամբարան-գերեզմանատունը, որը գտնվում է Աշտարակից 7 կմ դեպի հյուսիս՝ Ձորափ գյուղում:

Փակառու Բուզանդի վկայությամբ պարսից Շապուհ II (մ.թ. 309-379 թթ.) արքան, գրավելով Աճի-Կամախը և բաց անելով այնտեղ գտնվող Հայոց թագավորների դամբարանները, մտադրվել էր թագավորների ուսկորները տամել Պարսկաստան<sup>7</sup>:

Հեթանու պարսիկների հավատալիքների համաձայն՝ այդ թագավորների ուսկորների հետ միասին տվյալ դեպքում Պարսկաստան կտեղափոխվեր նաև Հայոց թագավորների «փառք, բախտն ու քաջությունը»: Սակայն, սպարապետ Վասակ Մամիկոնյանը, Այրարատում տեղի ունեցած ճակատամարտում հայթանակ տանելով պարսիկների դեմ (364 թ.), խլում է Արշակունյաց թագավորների ուսկորները և տանում-թաղում Այրարատ աշխարհի Աղձք (Աղջ) գյուղում (այժմյան Ձորափ):

Տվյալ իրադարձությունները իրենց արտացոլումն են գտել նաև Մովսես Խորենացու երկում: Ըստ Խորենացու, Պարսից սպարապետը հայոց նախարարների օժանդակությամբ գրավում է Աճի ամրոցը, ավար է առնում այնտեղ պահվող բռնոր արքունական զանձերը և թագավորների ուսկորները: Բայց նախարարների խընդրանքով այդ թագավորների ուսկորները ես են վերաբերձվում և թաղվում Աղջք գյուղում Արագածի ստորոտում: Ինչպես Խորենացին է նշում, թագավորների ուսկորները չթաղվեցին սրբերի հանգստարան Վաղարշապատում, որտեղ ետև նախարարները չկարողացան իրարից տարբերել մեթանոսների և հավատացյալների ուսկորները<sup>8</sup>:

<sup>7</sup> Փակառու Բուզանդ, Պատմություն Հայոց, էջ 191-192:

<sup>8</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 187-188:

Հ. Մանանյանը, վկայակոչելով Սեն-Մարտենին և Թ. Մարկարտին, գտնում է, որ Ակարագրված իրադարձությունները տեղի են ունեցել մ.թ. 359 թ-ին<sup>9</sup>, Բետւաբար և Արշակունի թագավորների նոր դամբարան-գերեզմանատունը նշվել է Պետինգերյան քարտեզի վրա:

Վաղ շրջանի աղբյուրներից հայտնի է, որ Գրիգոր Լուսավորչի ստեղծած առաջին թեմերից մեկն էր Այրարատյան Հայրապետական թեմը, որը անմիջականորեն ենթարկվում էր Կաթողիկոսին: Այս թեմի մեջ էին մտնում Վաղարշապատ, Արտաշատ և Դվին քաղաքները: Ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով Դվինի նշանակությունը, որպես եպիսկոպոսի նստավայրի, Ամանուն Ռավենացին Էկրատան-Արտաշատ ճանապարհի վրա, այլ կայանների հետ միաժամանակ, մատնանշել է նաև Խուա - Դվինը:

Խուա-ի անվանումը հուչում է, որ այս անվան վերծանությունը պետք է լինի Dua-in, որն էլ նույն Դվինն է: Խորենացին վկայում է, որ Դվին քաղաքը հիմնադրվել է մ.թ. IV դ-ի 30-ական թթ-ին Խոսրով Կոտակ (Փոքր) թագավորի կողմից<sup>10</sup>: Մեր կարծիքով IV դ-ի 60-ական թթ-ին, երբ վերջնականապես խմբագրվել էր Պևտինգերյան քարտեզը, Դվինը (հուն. Դուվի) իրենից ներկայացնում էր համեմատարար մեծ քաղաք՝ հայոց թագավորների նստավայրը:

Կրոնական կենտրոն էր և Ամիդը, որը Պևտինգերյան քարտեզի վրա նշված է «ad Tygrem» անվամբ: Ամիդի տեղորոշումը հնարավոր է դառնում, երբ հաշվի ենք առնում Պևտինգերյան քարտեզի վրա նշված Տիգրանակերտից մինչև «ad Tygrem» կայանը ընկած հեռավորությունը, այն է  $15+14+13=42$  հոռմ. մղոն (=60 կմ): Այս հեռավորությունը հենց այն նույն հեռավորությունն է, որ գոյություն ունի Տիգրանակերտից մինչև Ամիդ, և որը ապացուցվում է ամտիկ և միջնադարյան հետինակների տվյալներով:

Ն. Աղոնցի հաստատմամբ, IV դ-ում Ամիդը եղել է միտրոպոլիական կենտրոն: Նա այդ կապակցությամբ գրում է. «451 թ. Քաղկեդոնի ժողովի ստորագրություններից երևում է, որ այդ ժողովին մասնակցել են ինքնավար սատրապությունների ներկայացուցիչները, Սոփենեի, Անգիտենեի, Անգելենեի, Սոփանենեի և Մարտիրոսուպոլիսի (Տիգրանակերտ - Հ. Մ.) եպիսկոպոսները, որ կազմում էին Միջագետքի թեմը և ենթարկվում էին Ամիդ քաղաքի եպիսկոպոսի միտրոպոլիությանը: Օսրոյենեի առանձնանալուց հետո Միջագետք նահանջի մայրաքաղաք դարձավ Մշձինը, իսկ երբ 363 թվականին վերջինս անցավ պարսիկներին՝ մայրաքաղաք դարձավ Ամիդը»<sup>11</sup>:

<sup>9</sup> Հ. Մանանյան, Քննական տեսություն հայ ժողովոյի պատմության, Բ հատոր, Ա. մաս, Երևան, Բ. Երևան, 1978, էջ 175:

<sup>10</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 170:

<sup>11</sup> Ն. Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 403:

Մի շարք այլ՝ կրոնական կենտրոններ, որոնց թվում Bagasna-ն (Բագավան), Chafas-ը (Խադաս), Andaga-ն (Անդակ) և Satala-ն (Սատաղ) զանգում էին Արտաշատ-Սատաղ ճանապարհի վրա: Նրանց անվանումների մոտ Պևտինգերյան քարտեզի վրա առկա է երկու աշտարակների նշանը:

Յ. Մարկվարտի ենթադրությամբ, Chadas-ը կապված է Խաղ եպիսկոպոսի անվան հետ, որը, ինչպես վկայում են պատմական փաստաթղթերը, Ներսես I (Մեծ) Կաթողիկոսի կողմից նշանակվել էր Կաթողիկոսական տեղապահ: Ըստ Մովսես Խորենացու վկայության, Ներսես I-ը IV դ-ի կեսերին «շինում է եղբայրանցներ, մենաստաններ և մենակ (ճգնողների) համար խրճիթներ»<sup>12</sup>: Կարելի է ենթադրել, որ նման եկեղեցական հաստատություններից մեկը կառուցվել էր Խաղ եպիսկոպոսը, որից էլ այդ եկեղեցին ստացել էր իր անվանումը:

Հ. Մանանդյանը Andaga կայանը (ըստ Անանուն Ռավենացու՝ Andagas) նույնացնում է Անդակին: Սակայն Անդակի գտնվելու վայրը ևս հայտնի չէ:

Սատաղը, լինելով դեպի Արտաշատ տանող ճանապարհի վրա Վերջնական կետը, ինչպես ենթադրում են ուսումնասիրողները, առվազես Հայաստանի (Փոքր Հայքի) թեմական կենտրոններից էր:

Կողմնակի կանգնած է Բագավանը, որտեղ Գրիգոր Լուսավորչի կողմից IV դ-ի սկզբին մկրտվեցին Տրդատ III արքան և հայոց մեծամեծները: Դրանից հետո Բագավանում հիմնվել էր եպիսկոպոսական նստավայր:

Մեկ ուրիշ ճամանակական հուշարձան է համեխսանում Վասպուրականի Զորադիրի Ս. Էջմիածին վաճքը: Զորադիրի (Սորադիրի) այս կրոնական հուշարձանը ընկած է Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի վրա՝ Մեծ Աղբակ գավառում: Այն Պևտինգերյան քարտեզի վրա նշված «Molchia»-ն է (Զարեհավանից սկիզբ առնող ճանապարհի 39-րդ կիլոմետրի վրա): Խևկա մի ժայռ (Վերջինիս անունը ծագում է լատ. «moles» բառից, որը նշանակում է «բնական մեծակոշտ», «ժայռ»), որը վեր է հառնում հարյթ մի մակերևույթից և գտնվում է Զորադիր բնակավայրի մոտ: IV դ-ում այդ ժայռի վրա դեռևս չկար եկեղեցական շինություն, որը երևում է այն հանգամանքից, որ Molchia անվան մոտ բացակայում է երկու աշտարակների նշանը:

Զորադիրի Ս. Էջմիածին վաճքը հիմնվել է այդ վայրում VI դարում: Ըստ ավանդության այն կառուցել է Ս. Բարդուղիմեոսի վանքի<sup>13</sup> (որը գտնվում է Զորադիրի Ս. Էջմիածին վաճքի շրջակալքում) ճարտարապետի սանը VI դ-ում:

Մեր հոդվածում («Էջմիածին», 1999 թ., Բ) մենք ենթադրել ենք, որ Molchia-ն նույնանում է Մեծ Աղբակի Օսի բնակավայրի հետ, որը սակայն այժմ իր հիմնավո-

<sup>12</sup> Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, էջ 182:

<sup>13</sup> Ս. Բարդուղիմեոսի վանքը, ըստ ուսումնասիրողների, կառուցվել է մ.թ. VI դ-ում: Մեր կարծքով այն դուրս գտնվելով Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհից, այդ պատճենով չի նշվել Պևտինգերյան քարտեզի վրա: Նոյն պատճենով քարտեզի վրա չեն նշվել մասն Օսվարշավանը (Ս. Թաղեկի վանքը) և Վաղարշապատ քաղաքը:

րումն է ստանում որպես Զորադիրի Ս. Էջմիածին վաճք և գտնվում է Օսիից ոչ շատ հեռու:

Պատիճնգերյան քարտեզը իրավամբ կարող է համարվել նաև որպես աշխարհի կրոնամշակութային քարտեզ: Նրանում նշված բազմաթիվ անունները, որոնք վերաբերում են Առաջավոր Ասիային, իրենց մեջ պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք ոչ միայն կարևոր են Հայաստանի պատմական աշխարհագրության, այլ նաև կրոնի պատմության համար:

